


ՓԱՐԱՍԱՆԵՐԸ ՄԵՂԷ Է

«Գողերը, պոռնիկները, գինեմուլները եւ բամբասողները Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն» (Ս. Կորթ. 6.10)

Ահաւասիկ Աստուծան բոլորին բերանները չարախօսութեան անօրէն մոլութեամբ լեցուցած է: Յարատեւ կերպով բոլորին բերանները իրենց եղբօր դէմ չարախօսութեամբ եւ նախատիմքով կը բոցավառէ: Կը նկատեմ, որ անօրէնութիւն գործող անձերը աներկիւղ են ու չեն փութար գողութեան եւ պոռնկութեան իրենց վատ արարքներէն ապաշխարութեամբ լուացուելու եւ սրբուելու: Եթէ կը գարշիս շնութենէն, ուրեմն գարշէ՛ նաեւ բամբասանէն: Եթէ շնութիւնը գէշ է, Աստուած հաւասարապէս կը դատէ նաեւ բամբասանքը: Բայց առաքելը, որ օրէնքը կ'ուսուցանէ, բամբասանքի անօրէնութիւնը շատ աւելի մեծ ցոյց կու տայ, երբ կ'ըսէ. «Ան, որ եղբայրը կը բամբասէ, օրէնքը կը բամբասէ եւ օրէնքը կը դատէ» (Յակ. 4.11): Եւ ո՞ր անօրէնութիւնը աւելի գէշ է քան այն, որ փոխանակ Աստուծոյ օրէնքը գործադրելու, ինքզինք տէր եւ դատաւոր կ'ընէ: Ըսուած է, որ օրէնադիրն ու դատաւորը մէկ է, կը փրկէ, կ'ապրեցնէ եւ կորուստի կը մատնէ, իսկ դուն ինչո՞ւ կը դատես ուրիշին ծառան: Տե՛ս, թէ քանի մահերու պատասխանատու է ան, որ թագաւորին պատիւն ու հեղինակութիւնը կը յափշտակէ եւ դատաւորին դատը անձնապէս ինք կը կատարէ, որովհետեւ Տէրը կ'ըսէ. «Իմա է վրէժխնդրութիւնը եւ ես պիտի հատուցուցանեմ» (Բ. Յր. 32.35):

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎՐԼԴԻ ԽՈՐՀՈՒՐՈՒՆ ՀՎՏԱԼՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն


Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Նախ պատարագիչ բահանան առանձնական արժօքով իր խնդրանքները կը ներկայացնէ պատարագեալ Աստուածորդւոյն, որպէսզի իր սիրով շաղախէ հաւատացեալներուն սրտերը, հաստատուն պահէ անոնց հաւատքը, աշխարհին խաղաղութիւն պարգեւէ, հիւանդներուն բժշկութիւն շնորհէ եւ վտանգներու ու տառապանքներու մէջ գտնուողներուն ապատում տայ:

Կը խնդրէ օդի բարեխառնութիւն, դաշտերուն պտղաբերութիւն եւ բոլոր ննջեցեալերու հոգիներուն լայն եւ յաւիտենական հանգիստ:

Կը խնդրէ Տիրոջմէ, որպէսզի աստուածային ողորմութեան մէջ անշարժ եւ հաստատուն պահէ ...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 17 ՆՈՅՏԵՄԵՐ 2024

ԹԻԻ 46

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 25.9-26.7: Փլպ. 1.1-11: Ղկ. 9.44-50

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ԴՈՒՎԱՍԻ 9.44-50

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լաւ մտիկ ըրէ՛ք եւ մի՛ մոռնաք ասիկա: Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկեցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները սկսան վիճաբանիլ, թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով, որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ եւ ով, որ զիս ընդունած է՝ ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով, որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է՝ ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք՝ որ քու անունովը դեւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»:

Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն, որովհետեւ ան՝ որ հակառակ չէ՛ ձեզի կը նշանակէ, թէ՛ ձեր կողմն է»:

ՏԻՐՈՉ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Բարձրեալ է Յիսուս բայց բնաւ խոնարհը չ'անտեսեր: Հգօ՛ր է, բայց երբեք չի ոտնակոխեր տկարը: Մե՛ծ է, բայց չ'անտեսեր փոքրերը: Թագաւոր է, բայց չի նախատեր մեղքի ստրուկները: Անսխալական է, բայց չի դատապարտեր սխալածներս: Երանի՛ր ամէնքալ նմանիմք իրեն եւ երբ մեծանմք դիրքով ու հանգամանքով, ատիկա պատմաւ չըլլայ, որ չտեսնենք մեր նմանները եւ չլսենք խեղճերուն ձայնը :

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝ ԱՆԴՐԷԻ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍԻ

Անդրեաս առաքեալ Պետրոս առաքեալի եղբայրն է, որ Գալիլիոյ լիճին եզերքը իր եղբորը՝ Պետրոսի հետ, կը կանչուի Քրիստոսի կողմէ առաքելութեան: Անդրեաս նախապէս եղած է Յովհաննէս Մկրտիչի աշակերտը եւ լսած ըլլալով Յովհաննէսի վկայութիւնը Յիսուսի մասին նախքան Յիսուսէ կանչուիլը, արդէն անպաշտօն հետեւողը եղած է Յիսուսի եւ այդ պատճառով կոչուած է «Նախակոչ» առաքեալ:

Անդրեաս առաքեալ շատ քիչ կը յիշուի աւետարաններուն մէջ: Աւանդաբար կ'ըսուի, թէ եղած է Սկիւթացիներուն քաղաքից առաքեալը եւ սակայն եկեղեցի չէ հիմնած այնտեղ: Նաեւ քաղաքը կը նկատուի Հիւսիսային Յունաստանի մէջ եւ նահատակուած Բաթրաս քաղաքին մէջ, բազմապատկութեան նշանին նման խաչի մը վրայ, որով խաչի այդ ձեւը կը կոչուի նաեւ Ս. Անդրեասի խաչ:

Փիլիպպոս Առաքեալ

Փիլիպպոս առաքեալ Բեթսահիդայէն էր, Անդրեաս եւ Պետրոս առաքելներուն քաղաքէն (Յհ. 1.44):

Յիսուս, երբ կը կանչէ զինք առաքելութեան, Փիլիպպոս առաքեալ առանց ժամանակ կորսնցնելու կ'երթայ եւ կ'աւետէ Նաթանայէլին, թէ գտած են այն մարդը, որու մասին Օրէնքի գիրքին մէջ գրուած է (Յհ1.45):

Փիլիպպոս առաքեալ երեք տարիներ հետեւելէ ետք Քրիստոսի, միւս առաքելներուն նման, կ'անցի առաքելութեան եւ ըստ աւանդութեան կը քարոզէ Փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի խաչելութեամբ:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՆՍԱՆ

Հարցում.- Ի՞նչ է նշանտուքի մատանին իմաստը:

Պատասխ.- Նշանտուքները իբր սիրոյ գրաւական կամ նշան իրարու կը նուիրեն ոսկեայ մատանի, գորս կ'անցնեն իրենց մատնեմատներուն:

Մատանիներուն ոսկիէ շինուած ըլլալը կը նշանակէ, թէ ինչպէս որ ոսկին ազնիւ ու չժամգոտող մետաղ մըն է, նմանապէս զանոնք գործածողներն ալ, իրարու հանդէպ ունեցած սէրը պիտի պահեն մաքուր եւ անարատ: Նոյնպէս՝ մատանիի կտրուած օրինակով, իրենց սէրը պիտի կեդրոնանայ միմեանց անձերու շրջանակին մէջ, անկէ դուրս չելլելու պայմանով: Նկատելով նաեւ, որ մատնեմատէն երկարող երակ մը ուղղակի արտին կապուած է, ուստի խորհրդաբար մատանիները կ'ընդունուին իբրեւ երկու արտերը իրարու միացնող միջոցներ:

Սովորութիւն եղած է նաեւ տղուն կողմէ աղջկան նուիրել ականջի օղ եւ թեւի ապարանջան: Օղը՝ տեղեկութեան նշան է, թէ՛ աղջիկը գայն նուիրող երիտասարդին մասին հարկ եղած տեղեկութիւնը քաղած եւ ապա յարմար դատած է գայն ունենալ իբր նշանած եւ ապագային ալ՝ ամուսին: Ուրեմն անոր սէրն ու անունը ընդմիշտ իր ականջէն կախուած պիտի մնան: Իսկ ապարանջանը, որ կը հագնի կը նշանակէ, թէ այդ թեւերը կապուած ու վերապահուած են միայն գայն նուիրողին եւ անհատիկին:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԱՆՀԱՉԱՉՆԳՈՒԹԻՒՆԸ ՄԵՋ ԿԸ ՀԵՌՎՅԵՒ ԿԱՏՈՒԾՈՅ ԹՎԳՎՈՐՈՒԹԵՆԸՆ

Աստուած հրահանգեց Սաւուղին, որ յարձակի Ամաղեկացիներուն վրայ եւ սպաննէ «այր մարդէն մինչեւ կին մարդը, տղայէն մինչեւ կաթնկերը, արջառէն մինչեւ ոչխարը եւ ուղտէն մինչեւ էջը»: Սաւուղ Աստուծոյ խօսքին մէկ մասը միայն գործադրեց: Ինչ որ անպէտք էր՝ ջարդել տուաւ, բայց խնայեց «ոչխարներուն ու արջառներուն աղէկներն ու գերերը եւ գառներն ու ամէն պատուական բաները» (Ա.Թգ.15.3-9): Աստուծոյ հրահանգին անհնազանդ ըլլալը պատճառ եղաւ, որ Աստուած մերժէ Սաւուղը իբրեւ թագաւոր:

ՀԱՐՅՈՒՄ: Կ'արժէ՞ ոչխարներու եւ արջառներու համար անհնազանդ ըլլալ Աստուծոյ: Կ'արժէ՞ անասուններու համար կոտորել սիրտն ու խօսքը Աստուծոյ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍԸ

Քննենք մեր անձերը: Զըլլայ, որ մենք եւս Սաւուղի նման պարապ բաներու համար կը կոտորենք Աստուծոյ սիրտը: Սաւուղ անհնազանդ եղաւ եւ մերժուեցաւ իբրեւ թագաւոր. անհնազանդ ըլլալը մեզ ալ կրնայ հեռացնել Քրիստոսի թագաւորութենէն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՎՊԱՎԱՆ ԹՎՂՈՒՄԻՆ, ՅՔՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՎՄԲՎՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ, ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 69

Ապատէ՛ վիս ո՛վ Աստուած, ջուրերը մինչեւ կոկորդոս հասան. անյատական ճահիճին մէջ կը խրիմ, ուր ոտք դնելու տեղ չկայ. ծովուն խորը ինկեր եմ եւ յորձանքները կ'ընկղմեն վիս: Յոգնեցայ օգնութիւն ազաղակելէն, կոկորդոս չորցաւ, աչքերս աղօտացան՝ իմ Աստուծոյս սպասելէն: Գլխուս մազերէն աւելի շատ են առանց պատճառի վիս ատողները. պօրաւոր են թշնամիներս, որոնք իրենց սուտերով կը փորձեն վիս կործանել պահանջելով, որ հատուցանեմ ինչ որ չեմ յափշտակած: Յանցանքներս անձանօթ չեն քեզի, ո՛վ Աստուած, դուն լաւ գիտես ըսած յիմարութիւններս: Իմ պատճառովս թող ամօթով չմնան անոնք՝ որոնք քեզի՛ կը յուսան, ո՛վ Տէր, Ամենակա՛լ Տէր, իմ պատճառովս չըլլա՛յ որ խակտառակուին անոնք՝ որոնք մեզ կը պաշտեն, ո՛վ Աստուծը քու ժողովուրդիդ: Որովհետեւ ես քու սիրոյդ նախատինքներ կրեցի, եւ երեսս անարգանքով ծածկուեցաւ: Օտար սեպուեցայ եղբայրներուս կողմէ, անձանօթ համարուեցայ հարապատ ընտանիքիս կողմէ, որովհետեւ տաճարիդ հանդէպ իմ ունեցած նախանձախնդրութիւնս կրակի պէս վիս կ'այրէ:

Շարունակել սաղմոսագիրքէն